ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2020/1

ք. Սևան 23.03.2020 թ.

Սևանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ս. Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և "Ճան Շին" ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ալավերդյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սևան համայնքի փողոցների ա/բ ծածկույթի փոսային նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.05.2020թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն ----- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում

Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 17280000 (տասնյոթ միլիոն երկու հարյուր ութսունսուն հազար) ՀՀ դրամ, որից 2.880.000 (երկու միլիոն ութ հարյուր ութսունսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով

դրունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության ՀՀ դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ք. Սևան, Նաիրյան, 164	Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 28/3
ՀՎՀՀ 08601339	ՀՎՀՀ 08621582
Հ/Հ 900162164025	Հ/Հ 163148157213
ՀՀ ՖՆ ԳՎ	"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
23.03.2020 թ. կնքված
ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆՅԱ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը*	Ընդհանուր արժեքը դրամ
1	2	3	4	5	6
I.	**Սայաթ-Նովա փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,32	658,165	210,6128
2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,25	896,354	224,0885
3	Ասֆալտբետոնե ծածկույթի ճաքերի բիտումատում	100գծմ	1,85	32,181	59,53485
	1. Ընդամենը				**494,236**
II.	**Ս. Սևանեցու փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,28	658,165	184,286
2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,53	896,354	475,068
3	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	6	7,589	45,534
4	Դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	մ^3	1,5	77,077	115,616
5	Ապամոնտաժված ծածկի սալերի վերատեղադրում	հատ	6	7,793	46,758
6	Անձրևընդունիչների մաքրում ձեռքով	մ3	1,8	2,955	5,319
	2. Ընդամենը				**872,580**
III.	**Նալբանդյան փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,18	658,165	118,470
2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,55	896,354	492,995
3	Չափազատված խճի տեղադրում՝$h_{միջ.}$ =8-16սմ, S=45քմ՝հիմքով փոսային նորոգման համար	մ^3	5,4	12,374	66,820
4	Բիտումի տարածում «1000մ2-4.12տ բիտումի ծախ-սով, S=45մ2 հիմքով փոսային նորոգման համար	տ	0,185	273,216	50,545
5	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=6սմ, հիմքով փոսային նորոգման համար (Բ տիպի վերին շերտ)	մ^2	45	7,943	357,435
6	Ասֆալտբետոնե ծածկույթի ճաքերի բիտումատում	100գծմ	2,55	32,181	82,062
7	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	7	7,589	53,123
8	Դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	մ^3	1,6	77,077	123,323
9	Ապամոնաժված ծածկի սալերի վերատեղադ.	հատ	7	7,793	54,551
10	Անձրևընդունիչների մաքրում ձեռքով	մ3	2,3	2,955	6,797
	3. Ընդամենը				**1406,119**
IV.	**Հրազդան փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,27	658,165	177,705

2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,58	896,354	519,885
3	Չափազատված խճի տեղադրում՝$h_{միջ.}$ =8-16սմ, S=15քմ՝ հիմքով փոսային նորոգման համար	մ^3	1,8	12,374	22,273
4	Բիտումի տարածում «1000մ2-4.12տ բիտումի ծախսով, S=15մ2 հիմքով փոսային նորոգման համար	տ	0,062	273,216	16,939
5	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=6սմ, հիմքով փոսային նորոգման համար (Բ տիպի վերին շերտ)	մ^2	15	7,943	119,145
6	Ասֆալտբետոնե ծածկույթի ճաքերի բիտումատում	100գծմ	0,85	32,181	27,354
	4. Ընդամենը				**883,301**
V.	**Էներգետիկների փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,12	658,165	78,980
2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,16	896,354	143,417
3	Չափազատված խճի տեղադրում՝$h_{միջ.}$ =8-16սմ, S=38քմ՝ հիմքով փոսային նորոգման համար	մ^3	4,56	12,374	56,425
4	Բիտումի տարածում «1000մ2-4.12տ բիտումի ծախսով, S=38մ2 հիմքով փոսային նորոգման համար	տ	0,16	273,216	43,715
5	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=6սմ, հիմքով փոսային նորոգման համար (Բ տիպի վերին շերտ)	մ^2	38	7,943	301,834
6	Ասֆալտբետոնե ծածկույթի ճաքերի բիտումատում	100գծմ	0,55	32,181	17,700
	5. Ընդամենը				**642,070**
VI.	**Խաղաղության փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,11	658,165	72,398
2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,18	896,354	161,344
3	Ասֆալտբետոնե ծածկույթի ճաքերի բիտումատում	100գծմ	3,22	32,181	103,623
4	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	2	7,589	15,178
5	Դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	մ^3	0,45	77,077	34,685
6	Ապամոնտաժված ծածկի սալերի վերատեղադրում	հատ	2	7,793	15,586
	6. Ընդամենը				**402,813**
VII.	**Շինարարների փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,14	658,165	92,143
2	Ասֆալտբետոնե ծածկույթի ճաքերի բիտումատում	100գծմ	0,95	32,181	30,572
	7. Ընդամենը				
VIII.	**Աբովյան փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,58	658,165	381,736
2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,66	896,354	591,594
3	Չափազատված խճի տեղադրում՝$h_{միջ.}$ =8-16սմ, S=184քմ՝հիմքով փոսային նորոգման համար	մ^3	22,1	12,374	273,465
4	Բիտումի տարածում «1000մ2-4.12տ բիտումի ծախսով, S=184մ2 հիմքով փոսային նորոգման համար	տ	0,76	273,216	207,644
5	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=6սմ, հիմքով փոսային նորոգման համար (Բ տիպի վերին շերտ)	մ^2	184	7,943	1461,512

	Ասֆալտբետոնե ծածկույթի ճաքերի բիտումատում	100գծմ	1,25	32,181	40,226
7	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	7	7,589	53,123
8	Դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	$մ^3$	1,6	77,077	123,323
9	Ապամոնտաժված ծածկի սալերի վերատեղադրում	հատ	7	7,793	54,551
10	Անձրևընդունիչների մաքրում ձեռքով	մ3	3,8	2,955	11,229
	8. Ընդամենը				**3198,403**
IX.	**Մյասնիկյան փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	$100մ^2$	0,31	658,165	204,031
2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	$100մ^2$	0,66	896,354	591,594
3	Չափազատված խճի տեղադրում՝$h_{միջ.}$=8-16սմ, S=77քմ՝հիմքով փոսային նորոգման համար	$մ^3$	9,24	12,374	114,336
4	Բիտումի տարածում «1000մ2-4.12տ բիտումի ծախսով, S=77մ2 հիմքով փոսային նորոգման համար	տ	0,317	273,216	86,609
5	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=6սմ, հիմքով փոսային նորոգման համար (Բ տիպի վերին շերտ)	$մ^2$	77	7,943	611,611
6	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	5	7,589	37,945
7	Դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	$մ^3$	1,45	77,077	111,762
8	Ապամոնտաժված ծածկի սալերի վերատեղադրում	հատ	5	7,793	38,965
	9. Ընդամենը				**1796,853**
X.	**Չարենցի փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	$100մ^2$	0,15	658,165	98,725
2	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	2	7,589	15,178
3	Դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,72	77,077	55,495
4	Ապամոնտաժված ծածկի սալերի վերատեղադրում	հատ	2	7,793	15,586
5	Ասֆալտբետոնե ծածկույթի ճաքերի բիտումապատում	100գծմ	1,2	32,181	38,617
	10. Ընդամենը				**223,601**
XI.	**Գագարինի Թումանյան փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	$100մ^2$	0,22	658,165	144,796
2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	$100մ^2$	0,31	896,354	277,870
3	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	4	7,589	30,356
4	Դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	$մ^3$	1,1	77,077	84,785
5	Ապամոնտաժված ծածկի սալերի վերատեղադրում	հատ	4	7,793	31,172
	11. Ընդամենը				**568,979**
XII.	**Գագարինի Կոմիտասի փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	$100մ^2$	0,1	658,165	65,817
2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	$100մ^2$	0,23	896,354	206,161

	Չափազատված խճի տեղադրում՝$h_{միջ.}$=8-16սմ, S=120քմ՝ հիմքով փոսային նորոգման համար	մ^3	14,4	12,374	178,186
4	Բիտումի տարածում «1000մ2-4.12տ բիտումի ծախսով, S=120մ2 հիմքով փոսային նորոգման համար	տ	0,5	273,216	136,608
5	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=6սմ, հիմքով փոսային նորոգման համար (Բ տիպի վերին շերտ)	մ^2	120	7,943	953,160
6	Ասֆալտբետոնե ծածկույթի ճաքերի բիտումատում	100գծմ	0,8	32,181	25,745
7	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	2	7,589	15,178
8	Դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	մ^3	0,75	77,077	57,808
9	Ապամոնտաժված ծածկի սալերի վերատեղադրում	հատ	2	7,793	15,586
10	Անձրևընդունիչների մաքրում ձեռքով	մ3	1,8	2,955	5,319
	12. Ընդամենը				**1659,567**
XIII.	**Գագարինի Երիտասարդական փողոց**				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,22	658,165	144,796
2	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,18	896,354	161,344
3	Չափազատված խճի տեղադրում՝$h_{միջ.}$=8-16սմ, S=60քմ՝հիմքով փոսային նորոգման համար	մ^3	7,2	12,374	89,093
4	Բիտումի տարածում «1000մ2-4.12տ բիտումի ծախսով, S=60մ2 հիմքով փոսային նորոգման համար	տ	0,5	273,216	136,608
5	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=6սմ, հիմքով փոսային նորոգման համար (Բ տիպի վերին շերտ)	մ^2	60	7,943	476,580
6	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	5	7,589	37,945
7	Դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	մ^3	1	77,077	77,077
8	Ապամոնտաժված ծածկի սալերի վերատեղադրում	հատ	5	7,793	38,965
	13. Ընդամենը				**1162,408**
XIV.	**Նաիրյան փողոց**				
1	Ա/բետոն ծածկույթի կտրում ֆրեզերային եղանակով՝$h_{միջ.}$=4սմ	մ^2	215,0	0,612	131,580
2	Քանդված ա/բետոնի բարձում ինքաթափերի վրա և տեղափոխում 3կմ	տ	20,6	0,470	9,682
3	Հիմքի իրականացում չափազատված խճից՝ հմիջ.=8սմ,	մ^3	17,2	9,007	154,920
4	Ծածկույթի պատրաստում տաք մանրահատիկ ա/բետոնից՝ h=5սմ(Բ տիպի վերին շերտ)	100մ^2	2,15	516,880	1111,293
5	Բիտումի տարածում «1000մ^2-4.12տ բիտումի ծախսով, S=215մ^2	տ	0,88	152,893	134,546
6	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=5սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	0,92	658,165	605,512
7	Ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում h=7սմ,մինչև 5քմ մակերեսով (Բ տիպի վերին շերտ)	100մ^2	1,56	896,354	1398,312
8	Դիտահորերի և անձրևընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	7	7,589	53,123
9	Դիտահորերի պատերի բարձրացում B15 դասի բետոնով	մ^3	1,45	77,077	111,762
10	Ապամոնտաժված ծածկի սալերի վերատեղադրում	հատ	7	7,793	54,551

[illegible]բետոնե ծածկույթի ճաքերի բիտումատում	100գծմ	5,8	32,181	186,650
[illegible]ընդունիչների մաքրում ձեռքով	մ3	5,8	2,955	17,139
14. Ընդամենը				**3969,070**
Ընդհանուրը* (հազ. դրամ)				17280,0

***Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%,**
Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ք. Սևան, Նաիրյան, 164
ՀՎՀՀ 08601339
Հ/Հ 900162164025
ՀՀ ՖՆ ԳՎՆ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 28/3
ՀՎՀՀ 08621582
Հ/Հ 163148157213
"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
23.03.2020 թ. կնքված
ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆՅԱ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	***Սևան համայնքի փողոցների ա/բ ծածկույթի փոսային նորոգման աշխատանքներ***	24.03.2020թ.	Մինչև 30.05.2020թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		24.03.2020թ.	Մինչև 30.05.2020թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ք. Սևան, Նաիրյան, 164
ՀՎՀՀ 08601339
Հ/Հ 900162164025
ՀՀ ՖՆ ԳՎ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 28/3
ՀՎՀՀ 08621582
Հ/Հ 163148157213
"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
23.03.2020 թ. կնքված
ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	*45231177*	***Սևան համայնքի փողոցների ա/բ ծածկույթի փոսային նորոգման աշխատանքներ***	-	-	-	*17280000*	*17280000*	*17280000*	*17280000*	*17280000*	*17280000*	*17280000*	*17280000*	*17280000*	*17280000*

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ք. Սևան, Նաիրյան, 164
ՀՎՀՀ 08601339
Հ/Հ 900162164025
ՀՀ ՖՆ ԳԿ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 28/3
ՀՎՀՀ 08621582
Հ/Հ 163148157213
"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ